# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՆԱՏԻՎԱ ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 11 | տաբատներ | տաբատներ | տաբատներ | Սամ Տեքս ՍՊԸ | Գործվածքի մակերեսային խտությունը առնվազն 300±5 գրամ/մ2, բաղադրությունը՝ 65±2% բուրդ, 35±2% պոլիէսթեր: Գործվածքի տեսակը՝ ««TWILL»», գույնը՝ մուգ փիրուզագույն (կանաչակապտագույն), կտորի գույնը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Տաբատը մշակված է գոտիով, առաջամասում կողային թեք ներկարված գրպաններով և ծնկակալներով: Գուլֆիկը մշակված է շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ կոճակով: Գոտին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մշակված է 5 կամրջակով՝ մեկը գոտկատեղի հետնամասի կարի վրա, և գոտու չափսը կարգավորող 2 ախլակներով, որոնք կոճկվում են 1 օղակով և 2 հատ 15մմ տրամագծով կոճակներով: Կողային հատվածներում՝ ծնկամասից վերև, մշակված են ծավալուն եռածալ վրադիր գրպաններ՝ 20սմ լայնությամբ և 24սմ երկարությամբ, կափույրներով, որոնք ամրանում են կպչուն ժապավենով: Գրպանի ծալքերի լայնությունը 4-5սմ, ներքևից 2սմ ամրակարված, իսկ գրպանի վերնամասը (բերնը) մշակված է 1սմ լայնությամբ զարդակարով: Տաբատի ետևամասի աջ կողմում ներկարված է 15X15սմ չափսի գրպան՝ կափույրով: Կափույրը կոճկվում է գաղտնի կոճկվածքով 1 օղակով և 15մմ տրամագծով կոճակով: Տաբատի ներդիրը մշակվում է առնվազն 200 գրամ մ.քր. մակերեսային խտությամբ սինտեպոնով, որը մգդակարված է աստառացուի հետ՝ ներքին եզրից 15սմ բարձրության վրա: Ներքին եզրերը մշակված են կապիչներով: Չափսերը՝ չափս- |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | hասակային սանդղակին համապատասխան: Փաթեթավորումը՝ թափանցիկ պոլիէթիլենային պարկով: Պիտակի վրա նշված՝ տեսականու անվանումը, քանակը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից մատակարարին: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել: Պարտադիր, մատակարարի հաշվին կատարվում է լաբորատոր ստուգում: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

НАТИВА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-7 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 11 | | | | | |